

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-8/24-I/IIAP

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Հրաչյա Վոլոդյայի Ասցատրյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 352 252 332 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 352 252 332 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա


ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24
Հ/հ՝ 900011024115
ՀՎՀՀ՝ 00005673
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

ք. Երևան, Պ. Սևակի 1
Հ/հ՝ 900018005638
ՀՎՀՀ՝ 00008698
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝

(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Կ. Տ.

Կազմակերպության տնօրեն՝



Հրաչյա Վոլոդյայի Անցատրյան

Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

Անցատրյան Հրաչյա Վոլոդյայի


**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սադյանը և Կազմակերպության տնօրեն Հրաչյա Վուրդյայի Ասցատրյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-8/24-I/IIAP պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 352 252 332 ՀՀ դրամ գումարի չափով:


Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝


✓

(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱԴՅԱՆ



Կազմակերպություն

տնօրեն՝


(ստորագրություն)

Հրաչյա Վուրդյայի Ասցատրյան



ԱԿՆԿԱԿՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի


Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	20
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	20
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	20
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	5
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	0
Գրքեր, մենագրություններ՝	1
Գիտաժողովի նյութեր՝	20
Արտոնագրեր՝	0

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Հրաչյա Վուրդյայի Ասցատրյան

Կազմակերպության գիտքարտուղար՝


(ստորագրություն)

Սահակյան Հասմիկ Արտեմի




ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

«Հ դրամ»


Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	302 877 500	60 575 500	75 719 375	75 719 375	90 863 250
2.	տնտեսական ծախսեր՝	17 850 000	3 570 000	4 462 500	4 462 500	5 355 000
3.	այլ ծախսեր՝	31 524 832	6 304 966	7 881 208	7 881 208	9 457 450
Ընդամենը՝		352 252 332	70 450 466	88 063 083	88 063 083	105 675 700

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Հրայր Վոլոդյայի Ասցատրյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


(ստորագրություն)

Ռուզաննա Մելիքսեթի Մելիքյան




ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	17 850 000
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	9 950 000
2.	գազի ծառայություն	5 500 000
3.	ջրամատակարարման ծառայություն	442 000
4.	կապի ծառայություն	1 670 000
5.	աղբահանություն	288 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	31 524 832
1.	Սարքեր, սարքավորումներ	2 000 000
2.	Գույք	2 000 000
3.	Նյութեր	1 500 000
4.	Գործուղման ծախսեր	700 000
5.	Գիտական միջոցառման կազմակերպում	450 000
6.	Հրատարակման ծախսեր	650 000
7.	Պահակային ծառայություն	4 320 000
8.	Տրանսպորտային ծախսեր	1 982 000
9.	Ջեռուցման ծախսեր	3 250 000
10.	Վերանորոգման ծախսեր	2 750 000
11.	Այլ ծախսեր	722 832
12.	Միջազգային ծրագրերի աջակցում	11 200 000

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Հրայր Վոլոդյայի Ասցատրյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


(ստորագրություն)

Ռուզաննա Մելիքսեթի Մելիքյան



ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)
B - ամիսների քանակ E - գումարային
C - աշխատաժամանակի ռեժիմ

«Որպես»

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Ասցատրյան Հրաչյա Վոլոդյայի	տնօրեն	500 000	12	հիմնական	40	6 000 000
Սահակյան Վլադիմիր Գրիգորի	գլխական գծով տնօրենի տեղակալ	180 000	12	հիմնական	20	2 160 000
Շուքրյան Յուրի Հայկի	տնօրենի խորհրդակալ	55 800	12	համատեղություն	10	669 600
Սահակյան Հասմիկ Արտեմի	գլխական քարտուղար	155 000	12	հիմնական	20	1 860 000
Պետրոսյան Արտակ Արշակի	փոխտնօրեն	350 000	12	հիմնական	40	4 200 000
Միրզոյան Արտաշես Աշոտի	գլխավոր ճարտարագետ	275 000	12	հիմնական	40	3 300 000
Մելիքյան Ռուզաննա Մելիքսեթի	գլխավոր հաշվապահ	275 000	12	հիմնական	40	3 300 000
Հայրապետյան Լյուդմիլա Մայիսի	աշխատակազմի հաշվառման և գործադարության խմբի պետ	140 000	12	հիմնական	40	1 680 000
Կիրակոսյան Արփինե Լևոնի	ԱՀԳ խմբի օպերատոր	120 000	12	հիմնական	40	1 440 000
Ֆահրադյան Հարություն Բաբկենի	ճարտարագետ, էլեկտրիկ	110 000	12	հիմնական	40	1 320 000
Սիրունյան Ռուբեն Զիվանի	տեխնիկական անվտանգության ճարտարագետ	110 000	12	հիմնական	40	1 320 000
Ահարոնյան Նելլի Արթուրի	տեղեկատվական մենեջեր, տնօրենի օգնական	130 000	12	հիմնական	40	1 560 000
Խաչատրյան Կարինե Նիկոլայի	հավաքարար	111 000	12	հիմնական	40	1 332 000
Խաչատրյան Գայանե Ալբերտի	հավաքարար	111 000	12	հիմնական	40	1 332 000
Հարությունյան Արմեն Ռազմիկի	սանտեխնիկ- եռակցող, այգեպան	100 000	12	հիմնական	40	1 200 000
Բայազյան Վարդան Հաբիբի	վարորդ	96 000	12	հիմնական	40	1 152 000
Ասատրյան Գեղամ Դորիկի	վարորդ	96 000	12	հիմնական	40	1 152 000
Գրիգորյան Սոս Հարությունի	այգեպան-բանվոր	96 000	12	հիմնական	40	1 152 000
Առուշանյան Գուրգեն Հակոբի	մեխանիկ-վարորդ	49 000	12	հիմնական	20	588 000
Բունաթյան Վերա Արտաշեսի	ավագ տնտեսագետ	110 000	12	հիմնական	40	1 320 000
Մարտիրոսյան Կարեն Դերենիկի	տնտեսագետ-գանձապահ	130 000	12	հիմնական	40	1 560 000
Նալչաջյան Կարինե Գեորգիի	հաշվապահ	70 000	12	համատեղություն	20	840 000
Սահակյան Գոհար Արտեմի	տեղեկատվական մենեջեր	55 000	12	հիմնական	20	660 000


Զաքարյան Լաուրա Կարոյի	օպերատոր	96 000	12	հիմնական	40	1 152 000
Փիլոյան Նարինե Յուրիկի	օպերատոր	104 000	12	հիմնական	40	1 248 000
Արևշատյան Գայանե Հրանտի	օպերատոր	104 000	12	հիմնական	40	1 248 000
Մադաթյան Գայանե Հրանտի	տեղեկատվական մենեջեր	110 000	12	հիմնական	40	1 320 000
Մովսիսյան Լաուրա Ջոնիկի	գրադարանավար	130 000	12	հիմնական	40	1 560 000
Գիրգորյան Օքսաննա Լավրենտի	գրադարանավար	110 000	12	հիմնական	40	1 320 000
Հովհաննիսյան Լուսինե Արամի	տեղեկատվական մենեջեր	60 000	12	համատեղություն	20	720 000
Հակոբյան Փառանձեմ Մկրտիչի	տեխնիկական խմբագիր	65 000	12	հիմնական	20	780 000
Շահխաթունի Ալեքսան Գևորգի	գիտական խորհրդատու	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Թամազյան Շուշանիկ Մելիքսեթի	տեղեկատվական մենեջեր	55 000	12	հիմնական	20	660 000
Հովհաննիսյան Անահիտ Սարգսի	տեղեկատվական մենեջեր	120 000	12	հիմնական	40	1 440 000
Սողոմոնյան Ներսես Օնիկի	ներկարար	49 000	12	համատեղություն	20	588 000
Մարտիրոսյան Գագիկ Սեյրանի	վերելակավար	52 000	12	համատեղություն	20	624 000
Մուրադյան Ամալյա Մուրադի	պարետ	130 000	12	հիմնական	40	1 560 000
Մարկոսյան Էլինա Արմենի	ճարտարագետ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Նավոյան Արայիկ Լյուդվիկի	Միջազգային կապերի գծով տնօրեն	200 000	12	հիմնական	20	2 400 000
Գիտական անձնակազմ						
Բաժին						
Հաշվարկների ու տրամաբանական եզրահանգումների մողելների						
Շուքուրյան Յուրի Հայկի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Պողոսյան Սուրեն Սերյոժայի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Կարապետյան Հասմիկ Եղիայի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Պողոսյան Վահագն Սուրենի	Առաջատար գիտաշխատող	210 000	12	համատեղություն	20	2 520 000
Ալավերդյան Եղիսաբեթ Ծերունի	Ավագ գիտաշխատող	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Մանուկյան Սեդա Նշանի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Խաչատրյան Միքայել Համազասպի	Ավագ գիտաշխատող	150 000	12	հիմնական	20	1 800 000
Մամյան Վահագն Վահանի	Լաբորանտ	60 000	12	համատեղություն	20	720 000
Մոկացյան Արսեն Հակոբի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Վանյան Ազնավուր Արթուրի	Ճարտարագետ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Հայրապետյան Դավիթ Վլադիմիրի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Լազյան Արտյոմ Արարատի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Աթաշյան Ազիթ Ֆլիդի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Սիմոնյան Ռաֆիկ Կարենի	Լաբորանտ	60 000	12	համատեղություն	20	720 000
Աբրահամյան Բաբկեն Կառլենի	Լաբորանտ	60 000	12	համատեղություն	20	720 000
Մնացականյան Վարդան Արարատի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Բաժին						
Դիսկրետ մաթեմատիկա						
Ասլանյան Լևոն Հակոբի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000

Սահակյան Հասմիկ Արտեմի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Կարախանյան Վիլիկ Մկրտիչի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Արսենյան Իրինա Արամյիսի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Կարապետյան Իսկանդար Աբրահամի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Դարբինյան Սամվել Խորենի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Նիկողոսյան Ժորա Գեղամի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Սարգսյան Վահե Գնելի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Կարապետյան Կարեն Իսկանդարի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Ասլանյան Մինաս Սերգեյի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Մելքոնյան Մերիտուզ Արտակի	Լաբորանտ	60 000	12	հիմնական	20	720 000
Գիշյան Կարեն Միերի	Կրտսեր գիտաշխատող	90 000	11	համատեղություն	20	990 000
Բաժին Ինֆորմացիայի տեսության և վիճակագրական մոդելներ						
Հարությունյան Մարիամ Եվգենիի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Գևորգյան Աշոտ Սերգեյի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Մկրտչյան Սուսաննա Միհրանի	Ավագ գիտաշխատող	150 000	12	հիմնական	20	1 800 000
Հակոբյան Փառանձեմ Մկրտչի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Եսայան Արամ Օնիկի	Ավագ գիտաշխատող	150 000	12	հիմնական	20	1 800 000
Հարությունյան Աշոտ Նշանի	Ավագ գիտաշխատող	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Մովսեսյան Էմմա Հովհաննեսի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	հիմնական	20	1 080 000
Վեգիրյան Ռաֆայել Մովսեսի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	հիմնական	20	1 080 000
Դավթյան Տիգրան Միերի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Բաժին Կողմավորման և ազդանշանների մշակման						
Աբրահամյան Սերգեյ Ենոքի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Սարուխանյան Հակոբ Գևորգի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Ասատրյան Դավիթ Գեղամի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Սաժումյան Գրիգոր Սարգսի	Գիտաշխատող	115 000	12	հիմնական	20	1 380 000
Զորունց Էդգար Սամվելի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Սարուխանյան Սամվել Հակոբի	Ճարտարագետ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Պետրոսյան Արմեն Սուրենի	Ավագ գիտաշխատող	150 000	12	հիմնական	20	1 800 000
Մելքոնյան Զոյա Ալեքսանդրի	Լաբորանտ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Գևորգյան Զառա Դավթի	Լաբորանտ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Հովսեփյան Նարեկ Խաչիկի	Լաբորանտ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Մելքոնյան Գոռ Արամի	Լաբորանտ	60 000	12	հիմնական	20	720 000
Կյուրեղյան Սյունե Արայիկի	Լաբորանտ	60 000	12	համատեղություն	20	720 000
Օսիպյան Արտուր Արկաղիի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Բաժին Հաշվողական և ինացական ցանցեր						

Սահակյան Վլադիմիր Գրիգորի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Պետրոսյան Արթուր Սերգեյի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Շահինյան Տիգրան Արամի	Գիտաշխատող	115 000	12	համատեղություն	20	1 380 000
Պողոսյան Էդվարդ Մովսեսի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Գրիգորյան Սեդրակ Վարդանի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Պետրոսյան Գուրգեն Սերգեյի	Գիտաշխատող	57 500	12	համատեղություն	10	690 000
Աբրահամյան Սուրեն Արմենի	Գիտաշխատող	115 000	12	համատեղություն	20	1 380 000
Բալյան Սերոբ Գուրգենի	Գիտաշխատող	115 000	12	համատեղություն	20	1 380 000
Վարդանյան Արթուր Պապինի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Թադևոսյան Ռոբերտ Նորայրի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Մանասյան Արուսյակ Դավիթի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Պրոխորենկո Եվգենի Բորիսի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Պետրոսյան Սամուել Արթուրի	Լաբորանտ	60 000	12	հիմնական	20	720 000
Գևորգյան Հուսիկ Զիֆրիտի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Ղուկասյան Յուլյա Ղուկասի	Գիտաշխատող	115 000	12	համատեղություն	20	1 380 000
Կյուրեղյան Քնարիկ Մարտինի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Մինասյան Արսեն Արմենի	Լաբորանտ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Բաժին Կիրառական ծրագրային համակարգերի						
Գյուրջյան Միքայել Ղազարոսի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Նաղաշյան Զավեն Հովհաննեսի	Գիտաշխատող	115 000	12	համատեղություն	20	1 380 000
Հայրապետյան Անդրանիկ Գերասիմի	Ճարտարագետ	60 000	12	համատեղություն	20	720 000
Կենտրոն Գիտական հաշվարկների						
Ասցատրյան Հրաչյա Վոլոդյայի	Ղեկավար	225 000	12	ներքին համատեղություն	20	2 700 000
Նարսիսյան Վահի Ավետիս	Ավագ ճարտարագետ	156 000	12	հիմնական	40	1 872 000
Գազազյան Էմիլ Ալֆրեդի	Ավագ գիտաշխատող	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Գրիգորյան Հայկ Անդրանիկի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Աբրահամյան Ռիտա Մարտինի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Գյուլգյուլյան Էլիզա Անդրանիկի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Մինասյան Գայանե Հայկազի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Գիչունց Էդիտա Էդիկի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Սահակյան Մարինա Վլադիմիրի	Ավագ լաբորանտ	156 000	12	հիմնական	40	1 872 000
Լալայան Արթուր Գագիկի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Իշխանյան Հրաչյա Ավետիքի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Կենտրոն Գիտական տեղեկատվության վերլուծության և մոնիտորինգի կենտրոն						
Սարգսյան Շուշանիկ Արթուրի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
	Ավագ գիտաշխատող			հիմնական		


Միրզոյան Արամ Ռոբերտի		300 000	12		40	3 600 000
Գզոյան Էդիտա Գագիկի	Ավագ գիտաշխատող	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Հունանյան Սիմոն Ռաֆայելի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Սարգսյան Անուշ Արթուրի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Օհանյան Մարիա Զավադի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Շուշանյան Ռուզաննա Արսենի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	հիմնական	20	1 080 000
Փիլոսյան Անահիտ Փիլոսի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Կետոյան Գևորգ Էդուարդի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Կարապետյան Դավիթ Արմենի	Գիտաշխատող	115 000	12	համատեղություն	20	1 380 000
Եղիկյան Մարիամ Գագիկի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Կենտրոն Գիտական հետազոտությունների և կիրառությունների աջակցման						
Միրզոյան Արտաշես Աշոտի	Ղեկավար	225 000	12	ներքին համատեղություն	20	2 700 000
Թադևոսյան Ռոբերտ Նորայրի	Գիտաշխատող	57 500	12	ներքին համատեղություն	10	690 000
Վանյան Հարություն Ռաֆայելի	Ճարտարագետ	60 000	12	հիմնական	20	720 000
Լաբորատորիա Կենսաինֆորմատիկայի լաբորատորիա						
Պողոսյան Արմեն Համլետի	Ղեկավար	450 000	11	հիմնական	40	4 950 000
Պողոսյան Իրինա Արմենի	Լաբորանտ	120 000	11	հիմնական	40	1 320 000
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						875900
Ընդհանուր գումար՝						302 877 500


Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Հրաչյա Վոլոդյայի Ասցատրյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝


(ստորագրություն)


(ԱԱՀ)



ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

«Տեսական կոմայյուտերագիտության զարգացում և գիտատար գործիքային տեխնոլոգիաների ստեղծում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Տեսական և կիրառական հետազոտություններ տեսական կոմայյուտերագիտության զարգացման և գիտատար գործիքային տեխնոլոգիաների ստեղծման ուղղություններով

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Կատարել աշխատանքներ ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ հիմնարար և կիրառական հետազոտությունների հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Համակարգչային գիտություն և կիրառական մաթեմատիկա
 - հաշվարկների ու տրամաբանական եզրահանգումների մոդելներ
 - դիսկրետ մաթեմատիկա
 - ինֆորմացիայի տեսություն և վիճակագրական մոդելներ
 - կոդավորում և ազդանշանների մշակում
- Ծրագրային ապահովման գործիքներ, ցանցային և էլեկտրոնային ենթակառուցվածքներ
 - հաշվողական և իմացական ցանցեր
 - գիտական հաշվարկներ
 - կիրառական ծրագրային համակարգեր
- ՏՀՏ կիրառություններ պետական և սոցիալական կարիքների համար
 - Գիտական տեղեկատվության վերլուծություն և մոնիտորինգ
 - Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների նորարարություն

Նշված ուղղություններով ստացված տեսական և կիրառական արդյունքները հրապարակել տեղական և միջազգային գիտական ամսագրերում, զեկուցել տեղական և միջազգային գիտաժողովներում, քննարկել աշխատանքային նիստերում և սեմինարներում: Ներդրված կիրառական արդյունքների համար ձեռք բերել ներդրման ակտեր:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Հաշվարկների ու տրամաբանական եզրահանգումների մոդելներ

Շարունակվելու են հետազոտությունները վիրուսի տարածման և հարմարվողական իմունային համակարգի համատեղ էվոլյուցիայի մոդելի մի շարք բնութագրիչների անալիտիկ և էմպիրիկ ճանապարհով արժեքների ստացման ուղղությամբ: Մշակված ալգորիթմների վրա իրականացված ծրագրային համակարգը ադապտացվելու է գերհամակարգչի միջավայրում զուգահեռացման ալգորիթմների ներգրավմամբ: Վիրուսի տարածման ալգորիթմի ինքնակազմակերպվող բնույթը թույլ կտա ոչ միայն մեկնաբանել այն, այլև կիրառել այն (որոշակի վերապահումներով) որպես ԱԹՍ երամուտ մասնակիցների դեգերման նոր ալգորիթմ:

Ինտելեկտուալ համասեռ երամային համակարգերի նախագծման փուլում հիբրիդ ավտոմատների մոդելների կիրառության հետ կապված կուսումնասիրվի համասեռ հիբրիդ ավտոմատներով նկարագրվող երամային համակարգերի վիճակների հասանելիության խնդիրը, հաշվի առնելով անցումների հանրահաշվական բնույթը: Կրնտրվի հանապատասխան մոդելավորման գործիքային միջոց:

Հետազոտվելու են ինքնահանգեցվող (ըստ բազմանդամորեն սահմանափակված թյուրինգյան հանգեցման) բազմությունների գյոդելյան համարների բազմության հատկությունները և պարզաբանվելու է այդ բազմության հարաբերակցությունը մի շարք հայտնի ինդեքսային բազմությունների հետ:

Հետազոտելու է ո բնական թվով փոփոխականներից կախված բոլոր պարզագույն կարգընթաց ֆունկցիաների բազմության ունիվերսալ, $(n+1)$ փոփոխականներից կախված ընդհանրացված պարզագույն կարգընթաց ֆունկցիայի գոյության հարցը:

Դիսկրետ մաթեմատիկա

Դինամիկ որոշումների կայացման համակարգերը ուսումնասիրվելու են այն դեպքի համար, երբ որոշումը՝ դասակարգումն է դասերի միջև անցումների պարագայում, և առկա տվյալները փորձարարական և սահմանափակ են:

Ուսումնասիրվելու են զույգ հաջորդականությունների համահարթեցման ալգորիթմները, որոնք ճանաչում և համապատասխանեցնում են դրվագները, վերակարգավորում են դրանք:

Կընդլայնվեն Ֆուրիեի անալիզի արդի մեթոդների կիրառությունները հաշվողական մաթեմատիկայի խնդիրներում, մասնավորապես, գծային հավասարումների լուծումներից ազատ բազմությունների գնահատման մեջ:

Կիրականացվեն կիսասկտիվ կոհերենտ ռադիոլոկացիայի համակարգերի հետ կապված տեսական հետազոտություններ և կնախաձեռնվեն նման ռադիոկայանների գործնական կառուցման փորձեր:

Կդիտարկվեն դիսկրետ տոմոգրաֆիայի խնդիրներ ըստ տարբեր շերտային պրոյեկցիաների, կիստազոտվի նրանց բարդությունը, կմշակվեն այդ խնդիրների լուծման ալգորիթմներ:

Կուսումնասիրվեն Բոնդիի և Յունգի ընդհանրացված վարկածները, որոնք ընդգրկում են գրաֆներում համիլտոնյան և դոմինանտ ցիկլերին առնչվող հիմնարար արդյունքները որպես մասնավոր դեպքեր՝ բավարար պայմանների և ցիկլերի երկարությունների ստորին գնահատականների տեսքով:

Երկմասնյա կողմնորոշված գրաֆների համար առկա համիտոնյանության բավարար պայմանների օգտագործմամբ կմշակվի համիլտոնյան ցիկլի կառուցման ալգորիթմ:

Կմշակվեն նոր մեթոդներ աֆինական և/կամ պրոյեկտիվ երկրաչափություններում «գլխարկների» կառուցման համար:

Ինֆորմացիայի տեսություն և վիճակագրական մոդելներ

Աշխատանքներ կիրականացվեն հետևյալ ուղղություններով. գաղտնալսվող կապուղիների տարբեր մոդելների հետազոտություն, մասնավորապես, բաղադրյալ և փոփոխվող վիճակներով դեպքերը; մեծ տվյալների պայմաններում անձնական ինֆորմացիայի գաղտնիության պահմանման խնդիրների ուսումնասիրում; ինֆորմացիայի տեսության գործիքների կիրառում համակարգչային տեսողության ոլորտում:

Կուսումնասիրվեն տվյալների գաղտնիության ապահովման, ինչպես նաև այլ ինֆորմացիոն-տեսական տարբեր համակարգերում վիճակագրական վարկածների ստուգման և նույնականացման հարցերը:

Կշարունակվեն ինֆորմացիոն և վիճակագրական մեթոդների կիրառման վերաբերյալ հետազոտությունները պորտֆելների տեսությունում առաջադրվող տարաբնույթ խնդիրների լուծման նպատակով:

Հետազոտություններ կվարվեն մշտադիտարկող համակարգերից գրանցվող տարատեսակ տվյալների վերլուծության հիման վրա նոր ալգորիթմների նախաձեռնման նպատակով, որոնք թույլ կտան բարելավել մարդկային կարողություններից դուրս գտնվող առաջադրանքների ավտոմատացումը: Մասնավորապես, կդիտարկվեն ամպային մեծ ենթակառուցվածքների կառավարման մեջ առաջացող նմանատիպ խնդիրներ: Հետազոտությունների բնույթին համահունչ կլինեն հատկապես տվյալների սեղմման նոր մոտեցումների մշակումը՝ քիչ ուսումնասիրված տիպերի (օրինակ, հավելվածների լոգեր և հետագծեր) համար, պահպանելով դրանց համակարգային օգտակարությունը բազմաչափ տվյալների կրճատման կամ դրանց մեկնաբանելի ներկայացումների մեթոդներով:

Կոմպլեքս-պատահական ընթացքների պատկերացման շրջանակներում կուսումնասիրվեն նուկլոնները (պրոտոն, նեյտրոն) որպես եռակվարկ դինամիկ համակարգեր, որոնք ընկղմված են գունավոր գլյուոնային պլազմայի մեջ: Դուրս կբերվի կոմպլեքս ռեյաստիվիստիկ պատահական հավասարում, որը կնկարագրի գունավոր գլյուոնային պլազմայի մեջ ընկղմված եռակվարկ դինամիկ համակարգը: Կհետազոտվեն վիճակագրական հավասարակշռության սահմաններում առաջացած լրացուցիչ տարածությունների երկրաչափական և տոպոլոգիական

առանձնահատկությունները: Կձևակերպվեն մաթեմատիկական խնդիրները, որոնք անհրաժեշտ են պատահական շրջակայքի դաշտերը նկարագրող մասնակի ածանցիալներով երկրորդ կարգի դիֆերենցիալ հավասարումների թվային մոդելավորման համար:

Կողավորում և ազդանշանների մշակում

Կմշակվեն և կիրականացվեն օբյեկտների հայտնաբերման, տեղորոշման և ուղեկցման նոր մեթոդներ՝ նվիրված արագագործ և որակյալ համակարգի ստեղծմանը:

Շարժման աղմուկ (Motion noise) պարունակող պատկերների վերականգնում՝ տոմոգրաֆիկ, արբանյակային, անօդաչու թռչող սարքավորումների կողմից հաղորդվող պատկերները պարունակում են տարբեր տիպերի և բաշխվածության աղմուկներ: Նպատակը՝ այդ դասի պատկերների որակյալ և արագագործ մշակումն է:

Ապարատային տիրույթում HDMI ստանդարտով ստացված տեսապատկերների ֆորմատի ձևափոխում ծրագրավորվող տրամաբանական-ինտեգրալ սխեմայի վրա՝ հետագայում RGB պատկերի վերականգնման նպատակով, ինչպես նաև ելքային պատկերի RAW10, RAW12 ֆորմատին համապատասխանեցման նպատակով:

Կկատարվեն պատկերի բինարիզացիայի նոր մեթոդների մշակման աշխատանքներ և կիրառություններ: Կանցկացվեն փորձարարական հետազոտություններ, որոնց արդյունքները կընդհանրացվեն՝ բինարիզացիայի կատարելագործված համակարգի վերջնական տարբերակի մշակման նպատակով:

Կմշակվեն Վեյբուլի բաշխման պարամետրերի վիճակագրական գնահատման նոր մեթոդներ: Վերջին տարիներին կիրառական հետազոտությունների բնագավառում անհրաժեշտություն է առաջացել ունենալ արագագործ ալգորիթմներ Վեյբուլի բաշխման պարամետրերը գնահատելու համար: Մասնավորապես, այդ խնդիրը ողջ աշխարհում կիրառվում է քանու արագության, հզորության և այլ բնութագրերի հետազոտման նպատակով: Այդ կապակցությամբ գրականության մեջ առաջարկվել են էմպիրիկ բանաձևեր, որոնց կիրառման համար անհրաժեշտ չեն բարդ հաշվարկներ: Կուսումնասիրվեն մի շարք լայնորեն կիրառվող էմպիրիկ բանաձևերի ճշտության բարձրացման հնարավորությունները, ինչպես նաև մշակվելու են նոր էմպիրիկ բանաձևեր:

Նախատեսվում է մշակել պրիմիտիվ բազմանդամների կառուցման կոնստրուկտիվ եղանակ: Բարձր աստիճանի պրիմիտիվ բազմանդամները կարևոր դեր ունեն ծածկագրական համակարգերի համար վերջավոր դաշտեր գեներացնելու խնդրում: Բազմակողմ հաշվարկների համակարգերը (Multi party computation) ամպային միջավայրի զարգացմանը զուգընթաց դառնում են խիստ պահանջված: Նախատեսվում է մշակել արագագործ բազմակողմ հաշվարկների համակարգեր հիմնված վերջավոր դաշտերի վրա տրված հոմոմորֆիկ հատկություն ունեցող ֆունկցիաների վրա:

Հաշվողական և իմացական ցանցեր

Բազմապրոցեսորային հաշվողական համակարգերում հերթերի հետազոտման և արդյունավետ կազմակերպման եղանակների մշակման ուղղությամբ կմշակվեն արդյունավետ ալգորիթմներ, որոնց միջոցով հնարավոր կլինի փոքրացնել հերթերում գտնող առաջադրանքների սպասման ժամանակները: Նախատեսվում է իրականացնել ծրագրային մոդուլ, որը հնարավոր կլինի օգտագործել հաշվողական կլաստերային համակարգերում:

Մտավոր համակարգերի հետազոտում, կառուցողական մոդելների մշակում և իրականացում՝ կհետազոտվեն դասակարգիչների և էներգիայի մատուցիչների ձևավորման հնարավորությունները ըստ ֆիզիկայի ստանդարտ մոդելի: Կկատարվեն հետազոտություններ կոմբինատոր խնդիրներում կիրառվող գիտելիքների սիստեմիկ դասակարգման եղանակների TZT և PPIT սահմաններում:

Ցանցային և ամպային ծառայությունների անվտանգության հետ կապված՝ կապահովվեն ASNET-AM ցանցում գործող մի շարք ցանցային ծառայությունների անվտանգությունը և արդյունավետությունը: Այդ ծառայությունների թվում են՝ eduroam WiFi անլար ծառայությունը, Վեբ հոսթինգի (Web Hosting), Էլեկտրոնային փոստի (E-mail) և Դոմենային տիրույթների (DNS) ծառայությունները, SSL թվային հավաստագրերի ծառայությունները և MEET.ASNET.AM տարաբաշխված բազմաֆունկցիոնալ տեսակոնֆերանսների հարթակը:

Ցանցային տեղեկատվական համակարգերի ուղղությամբ կշարունակվեն BGP և OSPF պրոտոկոլների համագործակցության և օպտիմիզացման հետազոտությունները և նոր ցանցային

մոնիտորինգային համակարգերի իրականացման աշխատանքները: Կապահովվի ASNET-AM ցանցում գործող ցանցային սարքավորումների և կապուղիների անխափան աշխատանքը, կիետազոտվի Zabbix և Grafana մոնիտորինգային համակարգերի կիրառական հնարավորությունը, ցանցի ամբողջական քարտեզի կառուցման նպատակով կուսումնասիրվի Algorius Net Viewer-ի համակարգը:

Մեծ տվյալների էֆեկտիվ մշակումը բաշխված միջավայրում շարունակում է մնալ այսօրվա ամենաարդիական ուղղություններից մեկը: Աշխատանք կկատարվի այս ուղղության մասնավոր դեպքի՝ գրաֆի տեսքով ներկայացվող տվյալների համար: Նպատակն է՝ կատարել գրաֆի կառուցվածքով մեծ տվյալների հատկանիշների արտածման ալգորիթների հետազոտություն և ծրագրային լուծման մշակում:

Բարձր արտադրողականությամբ և ամպային հաշվարկներ

Հիմնական նպատակն է հետազոտել, գնահատել և օպտիմալացնել նոր մեթոդներ, ինչպես օրինակ, արտադրողականություն և կայունություն, արտադրողականություն և էներգասպառում: Ընդհանուր համատեքստում հիմնական խնդիրներն են հանդիսանում ավանդական և վիրտուալ ճարտարապետությունների օպտիմալացումը, արտադրողականության մոդելավորումը և վերլուծությունը, էներգասպառման օպտիմալացումը, ամպային ծառայությունների տրամադրումը, մաթեմատիկական և գիտական հաշվարկները: Այս առումով, գիտական հաշվողական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման համար կմշակվեն ճշգրիտ գործիքներ և ռեսուրսների արդյունավետ կառավարման քաղաքականություն, HPDA մեթոդներ, ծրագրավորման մոդելներ և ալգորիթմներ:


Կիրառական ծրագրային համակարգեր

Նպատակ է դրվել ուսումնասիրել և իրականացնել հայերենի ճանաչմամբ BERT ներդրնային ցանցի մեքենայական ուսուցում, գտնել այդ խնդիրը լուծելու համար տեխնոլոգիաներ, գործիքներ, ինչպես նաև մեծ ծավալի տվյալներ:

Գիտական տեղեկատվության վերլուծություն և մոնիթորինգ

Հետազոտության նպատակներից և խնդիրներից է ստեղծել գիտության գնահատման արդի և հնարավորինս անաչառ գործիքակազմ, ինչը հնարավորություն կընձեռի, մասնավորապես, գնահատել գիտական գործունեության արդյունավետությունը, վերհանել առավել արդյունավետ և արդիական գիտական ուղղությունները, ուսումնասիրել առկա միջազգային համագործակցությունը և այլն: Նպատակների և խնդիրների թվին է պատկանում գիտության ոլորտի վերաբերյալ առաջարկների նախապատրաստումը և կանխատեսումների իրականացումը: Գլխավոր նպատակներից է Գիտական հղման հայկական ցուցիչի ստեղծումը և գործարկումը, զարգացումը և տվյալների մուտքագրումը և պարբերական թարմացումը: Գործառույթների մեջ է մտնում նաև նոր ուղղություն՝ տվյալագիտությունը: Մաթեմատիկական, վիճակագրական մեթոդների և համապատասխան ալգորիթմների կիրառմամբ և հիմնվելով տվյալների վրա փորձ է արվելու բացահայտել օրինաչափություններ և իրականացնել կանխատեսումներ, օրինակ, գիտության ոլորտի համար: Իրականացվելու է նաև գիտական արդյունքի համապարփակ ներկայացման բաց հարթակի շարունակական սպասարկումը և թարմացումը:


Կազմակերպության
տնօրեն (նեկտոր)



(ստորագրություն)

(Ասցատրյան Հրայր)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

(Ասցատրյան Հրայր)
(անուն ազգանուն)

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *


Տեսական կոմպյուտերագիտության զարգացում և գիտատար գործիքային տեխնոլոգիաների ստեղծում» ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	Գիտական հետազոտություններ, կիրառական համակարգերի մշակում	Գիտական հետազոտությունների կատարում և կիրառական համակարգերի մշակում ԻԱՊԻ հիմնական գիտական ուղղություններով՝ Հաշվարկների ու տրամաբանական եզրահանգումների մոդելներ; Դիսկրետ մաթեմատիկա; Ինֆորմացիայի տեսություն և վիճակ. մոդելներ; Կողավորում և ազդանշանների մշակում; Հաշվողական և իմացական ցանցեր; Գիտական հաշվարկներ; Կիրառական ծրագրային համակարգեր; Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների նորարարություն; Գիտական տեղեկատվության վերլուծության և մոնիտորինգ	Գիտական հոդվածների հրատարակում տեղական և միջազգային բարձր վարկանիշային ամսագրերում, այդ թվում՝ առնվազն 40 գիտական հոդված Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում; 2 գիտական հրատարակում, Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում, 25 հոդված՝ ժողովածուներում Զեկուցումներ տեղական և միջազգային գիտաժողովներում Կիրառական արդյունքների ներդրումներ Հաշվետվություններ	I-IV եռամսյակ
2	ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ մասնագիտացված և ընդհանուր սեմինարների կազմակերպում	Սեմինարներ ըստ ԻԱՊԻ հիմնական գիտական և հարակից ուղղությունների	Զեկուցումներ, քննարկումներ	I-IV եռամսյակ
3	Գիտաժողովների և աշխատանքային նիստերի կազմակերպում	Համակարգչային գիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաներին նվիրված գիտական միջոցառումների անցկացում	Աշխատաժողովների կազմակերպում և անցկացում Գիտական արդյունքների տարածում, փորձի փոխանակում, տեղական և միջազգային համագործակցություն	I-IV եռամսյակ
4	Տեղական և միջազգային նախագծերի	ԳԿ-ի կողմից հայտարարված մրցույթներին հայտերի ներկայացում,	Օժանդակություն ինստիտուտի գիտական խմբերին՝ ներգրավվելու	I-IV եռամսյակ

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել էռամսյակային փուլերով:

նախապատրաստում և ներկայացում	Միջազգային ծրագրերի մրցույթներին հայտերի ներկայացում (համապատասխան մրցույթի առկայության պարագայում)	համար համապատասխան նախագծերում 3-4 հայտ ԳԿ-ի կողմից հայտարարված յուրաքանչյուր մրցույթին	
---------------------------------	--	---	--


Կազմակերպության
տնօրեն (ռեկտոր)



(ստորագրություն)

(Ասցատրյան Հրայր)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

(Ասցատրյան Հրայր)
(անուն ազգանուն)